

2014 թ. 0000000 22-00 0000 00000000000 00000 -000000000000 00000000 0000000 000000000000 , 000000000000 00000000 , 0000000000 0000000000 , 000000000000 0000000000000000 0000000 00000000000 0000000000 00000000000000 00000000 ` «0000000000 0000000000 » 000000000 :

Պահլիճում ներկայացված էին նկարիչներ Լ.Բոյախչեյի, Գ.Գրիգորյանի, Ա.Դիլբարյանի, Լ.Ճողոզվիլու, Թ.Մաճավարիանու, Շ.Մատուաշվիլու՝ Ա.Պիրադովի անձնական հարուստ հավաքածուի նմուշներ հանդիսացող գեղանկարչական աշխատանքները, որոնց Ալեքսանդր Բոգդանովիչը տալիս էր հետաքրքիր բացատրություններ, թե այս կամ այն գեղանկարում ինչ է պատկերված եւ, թե ինչ է ցանկացել արտահայտել հեղինակը:

Դաշնամուրային կատարումներով հանդես եկավ Ա.Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն, կոնսերվատորիայի պրոֆեսոր Արմինե Գրիգորյանը: Ալեքսանդր Պիրադովը նշեց, որ Արամ Խաչատրյանի երաժշտությունը հայկական լինելով հանդերձ, այնուամենայնիվ, թիֆլիսյան է:

Հայ եւ վրաց բանաստեղծների ու կոմպոզիտորների ստեղծագործությունները կատարեցին Վաժա Ազարաշվիլին, Վիլլի Գրիգորյանը, Անրի, Քրիստինա եւ Ռեզինա Մեյրաբովները, Թբիլիսիի հայկական պետական թատրոնի դերասան Սամվել Էլբակյանը, Թամարա Յաշակյանը, Բաջանա Ցիրկվաձեն:

Ա.Պիրադովը ողջ երեկոն վարեց երիտասարդական ավյունով: Ժպտաղեն հանդիսականները միմյանց ականջին շշուկով հարցնում էին, արդյոք նա 81, թե 51 տարեկան է: Մեկը պնդում էր, թե 81 է, մյուսը՝ թե 51, իսկ մտերիմները նրան կանչում էին ուղղակի «Պյադյա Շուրիկ»:

Կատարողական համարների արանքում Ա.Պիրադովը հետաքրքիր դեպքեր էր պատմում թիֆլիսի կյանքից, արտասանում հայ եւ վրաց բանաստեղծների, ինչպես նաեւ Օսիպ Մանդելշտամի ստեղծագործություններից:

Պատմեց, թե ինչպես է մի հնավաճառից գնել անվանի հայ նկարիչ Էդգար Շահինի աշխատանքը, որը ժամանակին հեղինակը նվիրել էր Ալեքսանդր Շիրվանզադեին:

Ա.Պիրադովը ներկաներին հիացնում էր իր արտիստիզմով, ժեստերով, դիմախաղով: Չնայած առաջացած տարիքին կենսախինդ էր, սուր հումորով, պայծառ հիշողությամբ, բարձր ինտելեկտով, փայլում էր իր անսպառ գիտելիքներով կերպարվեստի, երաժշտության, պոեզիայի, թատրոնի մասին: Ազատ խոսում եւ արտասանում էր գրական հայերեն, վրացերեն եւ ռուսերեն:

Բոլոր կատարումները ավարտվում էին բուռն ծափահարություններով: Հանդիսատեսը հիմնականում նախկին թբիլիսցիներն էին, տարեց պապիկներ ու տատիկներ: Մարդիկ երեկոյից հեռացան իրենց հետ տանելով հետաքրքիր տպավորություններ ու անջնջելի հիշողություններ:

0000000000 00000000
0000
000000